

ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈՂՈՎԻ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
d.hovhannisyan@president.am

Հին հայերենի հոլովական վերջաւորութիւնների ծագման հարցին անդրադարձել են պատմահամեմատական հայերենագիտութեան գրեթէ բոլոր նշանաւոր ներկայացուցիչները: Առանձին հարցեր բնութեան նիւթ են դարձել համեմատաբանական ամփոփիչ բնոյթի աշխատութիւններում, ինչպիսիք են, օրինակ, Կ. Բրուզմանի *Grundriß der Vergleichenden Grammatik der Indogermanischen Sprachen* (1916) (Հնդգերմանական լեզուների համեմատական քերականութեան հիմունքները) եւ Անտուան Մէլէի *Introduction à l'Etude Comparative des Langues Indoeuropéennes* (1934)¹ (Հնդեւրոպական լեզուների համեմատական ուսումնասիրութեան ներածութիւն): Հիմնահարցին առնչուող բոլոր տեսակէտներն ի մի են բերուել Գէորգ Ջահուկեանի *Հին Հայերէնի Հոլովման Միստէմը Եւ Նրա Ծագումը* (1959) եւ *Sravnitel'naya Grammatika Armianskogo Yazika* (1982) (Հայոց լեզուի համեմատական քերականութիւն) արժեքաւոր աշխատութիւններում: Մակայն դրանով հանդերձ հին հայերենի հոլովական ձեւերի առաջացման խնդիրը չի կարելի վերջնականապէս լուծուած համարել: Դրանցից, թերեւս, առանձնակի խնդիրներ չեն յարուցել միայն յոգնակի հայցականի *-u(-s)* եւ եզակի գործիականի *-ք(b)*, *-ւ(w)*, *-ւ(v)* վերջաւորութիւնները, որոնցից առաջինի նախաձեւ է համարում հնդ. **-ns*, իսկ երկրորդի **-hni*, իսկ, օրինակ, եզակի բացառական եւ յոգնակի սեռական, տրական ու բացառական հոլովների վերջաւորութիւնների ծագման հարցը լուրջ տարակարծութիւնների տեղիք է տուել: Տարակարծութիւնների տեղիք է տուել նաեւ յոգնակի անուանականի *-ք(k')* վերջաւորութեան ծագման հարցը², հետեւաբար մասնակիորէն խնդրայարոյց է նաեւ յգն. գործիականի կազմութեան հարցը, որքանով, իբրեւ կանոն, յգն. գործիականը հաւասար է «եզ. գրծ.+ք» (հմմտ. բանիւք, ձեռամբք, դատերբք, գործուք, ծովուք եւն.): Այս սկզբունքը խախտուում է միայն առանձին դէպքերում, երբ գործիականն ունի գուգաձեւութիւն (հմմտ. վոքու/*-ւք-ք*, աղբերք/*-աւ-ք*): Ուստի միանգամայն տեղին է հնչում Մէլէի դիտողութիւնը, որ հայերէնում «*յոգնակիի հոլովական վերջաւորութիւնները բաւական վթին են*»³:

Հայերիի Հիւբշմանը 1883ին հրատարակուած իր *Հայագիտական Ուսումնասիրութիւնների* յաւելուածում ենթադրութիւններ է արել հայերենի հոլովական որոշ թեքոյթների, այդ թում՝ եզակի բացառականի ծագման վերաբերեալ: Ըստ այդմ՝ բացառականի «*է-ն պէտք է որ *ey-ից*

սերուելիս լինի եւ պետք է մեկնաբանի մի հնդեր. e-tos (հմմտ. սնս. yatas, tatas, sarvatas, agratas, զենդ. xwatō, aiwito եւ այլն) ձեւով»⁴:

Հոլգեր Պեդերսընը «նուագ հաւանական» է համարել Հիւբըմանի տեսակէտը: Նրա կարծիքով յետադաս մասնիկը ոչ թէ պարզապէս աւելացել է տարբեր արմատների վրայ, «այլ իրմէ յառաջ -է- տառ մընդունած է, որ միայն *n*- արմատներու մէջ կրնայ մեկնուիլ»⁵: Թէեւ Հիւբըմանը *-n* հիմքով գոյականների *-ny* վերջաւորութիւնը բխեցնում է **-o-tos*ից, այլ ոչ թէ **-osio*ից, սակայն դա եւս խնդիրը չի լուծում, որովհետեւ, ըստ Պեդերսընի, եթէ այդ «ենթադրութիւնը... նպաստաւոր» է *ի սրտէ, ի զարդուէ (զարդէ), ի սերմանէ, ի դստերէ* ձեւերի համար, ապա չի բացատրում բացառականի այնպիսի դերանուանական տարբերակներ, ինչպիսիք են *յորմէ (որ), յումեքէ (ոք), ի նմանէ (նա) «նրանից», յայնմանէ (այն, սեռ. այնք, տր. այնմ), ի նոցանէ «նրանցից» (նա)* եւ յատկապէս՝ *ի մէնջ «մեզնից/մեզանից» (մեք), ի ձէնջ «ձեզնից/ձեզանից» (դուք)*: Նրա կարծիքով յատուկ ուշադրութեան արժանի է «...ց վերջատառ սեռականի վրայէն բացառականի կազմութիւնը, որ տեսնուած բան չէ»⁶: Բացառականի վերջաւորութեան անուանական եւ դերանուանական ձեւերի համար ընդհանուր նախաձեւի վերականգնումը, ըստ ամենայնի, դժուարութիւն է ներկայացնում մի կողմից՝ *ի տեղւոջէ, ի տարւոջէ, ի գեղջէ, ի կնոջէ*, իսկ միւս կողմից՝ *ի մէնջ, ի ձէնջ* տիպի ձեւերի ոչ-միօրինակ կազմութեան պատճառով: Նշուած ձեւերի հիման վրայ նա եզրակացնում է, որ բացառականի *-է* վերջաւորութիւնը նախապէս ինքնուրոյն բառ էր, «որ իւր հնդրառուած տրականի վրայ կցուելով՝ ներգոյականի իմաստը կը փոխէ բացառականի»⁸: Պեդերսընը ուղիղ կապ է տեսնում գրաբարի տրականի, ներգոյականի եւ բացառականի միջեւ:

Պեդերսընի տեսութեան մէջ բաց են մնում հետեւեալ հարցերի պատասխանները. 1) բառային արժէքով *Հն* հայերէնը ժառանգել է նախահնդերոպական լեզուի՞ց, փոխառել է մէկ այլ լեզուի՞ց, թէ՞ զարգացրել է ինքնուրոյն պատմութեան ընթացքում, 2) եթէ *Հն* ունի հնդ. ծագում եւ նրա նախաձեւը **-etos*ը կամ **-osio*ն չէ, այդ դէպքում ո՞րն է:

Մէյէն, ընդհակառակը, ունի նոյն տեսակէտը, ինչ եւ Հիւբըմանը: Որպէս լրացուցիչ փաստարկներ՝ նա նշում է հետեւեալները. ա) հնարաւոր չէ որեւէ համապատասխանութիւն հաստատել հնդ. բացառականի եւ հայերէնի բացառականի միջեւ, որովհետեւ հնդ. բացառականը յատուկ վերջաւորութիւն ունէր միայն *-o(-n)* հիմքով բառերի դէպքում՝ **-ōd* (հմմտ. սնսկ. *vřka d*, լատ. *lupō(d)*, լիտ. *vilkō*), իսկ գրաբարում, ընդհակառակը, *-n(-o)* հիմքով բառերի բացառականը ձեւով չի տարբերում սեռական-տրականից, բ) հնդ. լեզուաընտանիքում հայերէնը ամենից մօտ է «յունարէնի տիպին մօտիկ կանգնած տիպին». թէպէտեւ պատմական շրջանում յունարէնը չունի ոչ ներգոյականի եւ ոչ էլ բացառականի

ձեւեր, բայց Հումերոսի մօտ, որի ստեղծագործութիւնները յունարէնի ամէնից հին վկայութիւններն են, հանդիպում են *οὐρανόθι* «երկնքում» եւ *οὐρανόθεν* «երկնքից» ձեւերը, ուր *-θίν* արտայայտում է ներգոյականի, իսկ *-θεν*՝ բացառականի իմաստ, գ) *տեղւոջ, գեղջ, կնոջ, մէնջ, ձէնջ* եւ նման ձեւերում առկայ ջի նախաձեւեր, ըստ նրա, **dhy*ն է, այլ ոչ թէ **gʷh*ն, ինչպէս կարծում է Պեդերսընը: «երկնքում» և

Եզակի բացառականի-է թերոյթի ծագման հարցում Աճառեանն ու Ջահուկեանը, ըստ էութեան, համամիտ են Հիւբշմանի եւ Մէլի հետ՝:

Իհարկէ, յատկապէս պատմահամեմատական լեզուաբանութեան մէջ նորութիւն չէր այն միտքը, որ քերականական մասնիկները նախապէս եղել են ինքնուրոյն բառեր: Ժամանակի ընթացքում, զրկուելով բառային շեշտից, կորցրել են բառային ինքնուրոյնութիւնը եւ վերածուել մասնիկների, որն էլ համապատասխան բառին կցուելու պատճառ է դարձել: Այդպիսի բառային միաւորներ կան նաեւ ժամանակակից լեզուներում, այդ թւում՝ հայերէնում: Այդպիսիք են բոլոր կարգի առդրութիւնները (նախդիրները, նախադրութիւններն ու ետադրութիւնները), որոնք խօսքում ինքնուրոյն գործածութիւն չունեն (հմմտ. *ց, ի, առ, ընդ*՝ գրաբարում, *մասին, վրայ, հետ, դէպի*՝ արդի հայերէնում, *from* (համարժէք է հյ. բցո. *-ի* վերջաւորութեանը, ու. *от, из, с* նախդիրներին), *on* «վրայ», *to* «մէջ, դէպի», *in* «մէջ»՝ անգլերէնում, *à* «դէպի», *sur* «վրայ, մասին», *en* (հմմտ. *en été* «ամռանը»), *chez* «մօտ»՝ ֆրանսերէնում, *над* «վրայ», *к* «դէպի, մօտ», *без* «առանց», *у* «մօտ»՝ ռուսերէնում եւն.): Օրինակ՝ գրաբարեան *առ* եւ *ի* նախդիրները արդի հայերէնում առաւելապէս ունեն նախաձանցային կիրառութիւն (հմմտ. *առհասարակ, առյաւէտ, իհարկէ, իզուր*), թէպէտ առանձին դէպքերում պահպանել են նաեւ իրենց նախդրային բնոյթը (հմմտ. *ի գիտութիւն, առ այսօր*): Թէ՛ իբրեւ նախդիր եւ թէ՛ իբրեւ նախաձանց այդ բաղադրիչներն այժմ գուրկ են բառային շեշտից:

Այդ հարցերին պատասխանելու համար, կարծում ենք, գրաբարեան բացառականի վերջաւորութիւնների (ինչպէս եզակի, այնպէս էլ յօգնակի թուերի) հարցը պիտի քննել ոչ թէ առանձնաբար, այլ հնդեւրոպական ցեղակիցների հոլովական համակարգերի հետ համալիր առնչութիւնների տիրոյթում, մասնաւորապէս տիպաբանական զուգահեռների համատեքստում: Այդ տեսանկիւնից ուշագրաւ են հետեւեալ իրողութիւնները.-

ա) Արեւմտեան (կենտում) խմբի լեզուների հոլովական համակարգերը հնդեւրոպականի համեմատութեամբ ենթարկուել են զգալի փոփոխութիւնների: Այսպէս, նախահնդեւրոպական լեզուի ութ հոլովներից (անուանական, կոչական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական) հին յունարէնը պահպանել է միայն

հինգը՝ անուանականը, կոչականը, հայցականը, սեռականը եւ տրականը: Սեռականն իր վրայ է վերցրել նաեւ բացառականի, իսկ տրականը՝ նաեւ միջոցականի (орудийный, իմա՝ միջոցական գործիական) եւ ներգոյականի գործառնությունները. այդ հոլովների իմաստները ճշգրտում են նախդիրների միջոցով¹⁰: -Լատիներէնում պահպանուել է «վեց կենդանի հոլով»՝ նշուածներին աւելացնելով արլատիւր (ablativus). այս հոլովը լատիներէնում բազմիմաստ է, բայց հիմնականում համընկնում է այլ լեզուների գործիականին, ի տարբերութիւն, օրինակ, հնդ. նախալեզուի կամ սանսկրիտի, ուր արլատիւն ունի բացառական հոլովի իմաստ: Լատիներէնում պահպանուել են նաեւ ներգոյականի հետքերը, իսկ ընդհանրապէս այն անհետացել է¹¹: Վեց հոլով է պահպանել նաեւ խեթերէնը՝ անուանական, հայցական, սեռական, տրական (-ներգոյական), բացառական, գործիական: Հին խեթերէնում տրականն ու ներգոյականը տարբերակուել են որպէս ինքնուրոյն հոլովներ, հետեւաբար հոլովների թիւր եղել է եօթ: Լուվիերէնում ձեւով չեն տարբերուել բացառականը (ablativus) եւ գործիականը (instrumentalis), հետեւաբար հոլովների թիւր նուագել է եւս մէկով¹²: Գոթերէնը պահպանել է չորս հոլովական ձեւ՝ անուանականի, սեռականի, տրականի եւ հայցականի. «կոչական հոլովը պահպանուել է միայն եզակի թւում՝ հոլովման որոշակի տիպերում»¹³: Կելտական լեզուներում նոյնպէս հնդ. հոլովման համակարգը ենթարկուել է պարզեցման. մասնաւորապէս՝ «գործիականն ու ներգոյականը համընկել են տրականի հետ եւ արդիւնքում ստացուած հոլովն ստացել է տրական անուանումը», իսկ բրետական լեզուներում առհասարակ հոլովական վերջաւորութիւններն անհետացել են¹⁴: Մյսպիսով, արեւմտեան լեզուախմբի 5 տարբեր լեզուաճիւղեր ներկայացնող 6 լեզուներից եւ ոչ մէկը չի պահպանել հնդեւրոպական հոլովական դրրուածքը, իսկ յունարէնն ու գոթերէնը պահպանել են գրեթէ կիսով չափ:

բ) Պատկերն առանձնապէս չի տարբերում նաեւ արեւելեան (սատրմ) խմբի լեզուներում: Մյս խմբի լեզուներից միայն հին հնդկերէնն է ամբողջականօրէն պահպանել հնդ. հոլովական համակարգը, այն է՝ տարբերակում է ութ հոլով՝ եօթ քերականոյթների հակադրութեամբ¹⁵:

- Հին սլաւոներէնում բնաւոր (e/o) հոլովման գոյականների բացառականի հոլովաձեւը անհետացել է, իսկ անբունների դէպքում եզակի թւում նոյնացել է սեռականի, յոգնակի թւում՝ տրականի հետ, որ նոյնն է, թէ՛ դարձեալ չի պահպանուել: Բայց եւ այնպէս, հին սլաւոներէնը պահպանել է միւս եօթ հոլովաձեւերը:

- Գրեթէ նոյն պատկերն առկայ է լիտվերէնում. եթէ բնաւոր գոյականների բացառականն անհետացել է ընդհանրապէս, ապա անբունների բացառականը մերթ՝ նոյնացել է սեռականի հետ (հմմտ. mātris «մօր-մօրից», aviēs «ոչխարի-ոչխարից»), մերթ՝ տրականի հետ (հմմտ. avims «ոչխար-

ների(ն)-ոչխարներից»), մերթ էլ՝ անհետացել է, ինչպես, օրինակ, *sūnūs* «որդի» կամ *rankā* «ձեռք» գոյականների դեպքում¹⁶:

- Իրանական հին լեզուներից հոլովական ձևերով հարուստ է յատկապես աւեստայի լեզուն: Այսպես, *a* եւ *ā* հիմքերով անունների դեպքում եզակի թոււմ այն տարբերակում է բոլոր ութ հոլովաձեւերը, իսկ յոգնակի թոււմ՝ եօթ. չունի կոչական հոլովի ձեւը: Հին պարսկերէնում *a* հոլովման անունների եզակի սեռականն ու տրականն ունեն նոյն ձեւը, իսկ յոգնակի թոււմ ոչ միայն այդ հոլովների ձեւային տարբերակում չկայ, այլեւ ջնջուել է բացառականը: *Ā* հոլովման անունները յոգնակի թոււմ չեն պահպանել կոչական, տրական, բացառական եւ գործիական հոլովները, այսինքն՝ տարբերակում են միայն չորս հոլովաձեւ՝ անուանական, հայցական, սեռական եւ ներգոյական¹⁷:

Ինչպես արեւելեան, այնպես էլ արեւմտեան ցեղակիցների հետ հին հայերէնի հոլովական վերջաւորութիւնների գուգադրական քննութիւնը բացայայտում է հետեւեալ պատկերը.

1) Հին հայերէնը չունէր կոչական հոլովի ձեւ, ի տարբերութիւն այնպիսի ցեղակիցների, ինչպիսիք են, օրինակ՝ հին հնդկերէնը, աւեստերէնը, հին յունարէնը, պաւոներէնը, լատիներէնը եւ հին լիտվերէնը, որոնք այդ հոլովաձեւը պահպանել էին եզ. ինչպէս բնատր, այնպես էլ անբուն հոլովական յարացոյցներում (հմմտ. սնսկ. ան. *vy' kah*, կոչ. *vy' ka* «գայլ», հին յուն. ան. *λν' kός*, կոչ. *λν' kε*, սլաւ. ան. *влькѣ*, կոչ. *вльче* եւն.՝ բնատր հոլովման դեպքում, սնսկ. ան. *mātā'*, կոչ. *mā' tar*, հին յուն. ան. *μη' τήρ*, կոչ. *μη' τέρ*՝ անբուն հոլովման դեպքում)¹⁸. 2) եզ. գրաբարեան անւն ու հյց.ը համընկնում են, իսկ նշուած ցեղակիցներից սնսկ. ունի *-m/-am* (հմմտ. *vy' ka-m/māta' r-am*), հին յուն.՝ *-ov/a* (հմմտ. *λν' κ-ov/μητέρα*), լատ.՝ *-um/-em* (հմմտ. *lup-um/mātr-em*) ձեւերը եւն., եւն.: Դրանց համար վերականգնում են **-m/*-m* նախաձեւերը. պատմահամեմատական հայերէնագիտական ուսումնասիրութիւնների համաձայն դեռեւս նախագրաբարեան փուլում հայերէնում անհետացել են հնդ. եզ. անւ.ի եւ հյց.ի վերջաւորութիւնները, որի պատճառով այդ հոլովաձեւերը նոյնացել են¹⁹. յգն. թոււմ գրբ. հյց.ն ունէր *-u (-s)* վերջը՝ նախալեզուի **-ns/*-ns* վերջաւորութիւնների դիմաց. ցեղակիցներից սնսկ. ունէր *-n/-s* (*vy' kā-n/mātr' -s*), լիտվ.՝ *-ūs/-is*, յուն.՝ *-ovς [us]/ας*, սլաւ.՝ *-vi²⁰/u*, լատ.՝ *-os/-ōc*, գոթ.՝ *-ans (wulfans* «գայլեր»)/-uns (*broþrunς* «(գ)եղբարս»), իւեթ.՝ *-uš²¹ (antuhš-uš* «(գ)մարդիկ»/hūmant-uš «ամէն մի») վերջաւորութիւնները: Ինչպէս տեսնում ենք, ձեւերի մեծ մասի հյց.ի հոլովակերտն իր մէջ ունի *-s(-u)* մասնիկը: Պիտի ենթադրել, որ գրաբարում հնդ. յգն. հյց.ի **-ns* վերջաւորութիւնն են պահպանել *-r* վերջն ունեցող *ni* հիմքով մի քանի բառեր, ինչպէս՝ *բարձր-բարձ-ու*, *(գ)բարձու-նս*, *քաղցր*, *քաղց-ու*, *(գ)քաղցու-նս*, *փոքր*, *փոք-ու*, *(գ)փոքու-նս*, *ծանր*, *ծան-ու*, *(գ)ծանու-նս*, *մանր*, *ման-ու*,

(*q*)*մանու-նս*, որոնք յոգնակիի ձևերն առհասարակ կազմել են սեռ.-տր. ձևից²². ասուածից հետեւում է, որ միւս հիմքերով հոլովումներում յգն. *հյց.ի-նն* շատ վաղ շրջանում անհետացել է. 3) անուանական հոլովման սեռ.ը եւ տր.ը ինչպէս եզ., այնպէս էլ յգն. թուերում նոյնն են բոլոր հոլովումներում, բացառութեամբ *n* հոլովման պատկանող *տարի, տեղի, մի* բառերի, որոնցից առաջին երկուսի տր.ը, սպասելի *-ի* փոխարէն, ունի *-ջ* վերջնամասնիկը, իսկ երրորդի տր.ը *-մ* (*մի-ում*).*-ջ* մասնիկ ունի վերջինի սեռ.ը *-ին* զուգահեռ (*մի-ոյ/-ոջ*). նախահնդերոպականում սեռ.ը եւ տր.ը ինքնուրոյն հոլովներ են. բնաւոր հիմքերի սեռ.ի համար վերականգնում են **-os-jo* (ըստ ամենայնի՝ սրանից են ծագում նաեւ լատ. *ին lup-ի* «գայլի» եւ կելտականների *-ն*) եւ **-e-so*(> նաեւ գոթ. *-isը wulf-is*), իսկ անբունների սեռ.ի համար **-es/*-os/*-s* վերջաւորութիւնները: Յեղակիցներից սեռ.ի եւ տր.ի ձևերը տարբերակում են, օրինակ, սանսկրիտը, աւեստան, հին յունարէնը, լատիներէնը եւ սլաւոներէնը, որոնք եզ. սեռ.ում ունեն հետեւեալ վերջաւորութիւնները. սնսկ. *-a-sya* բն., *-ur*՝ անբուն. վերջինը ռոտացիզմի²³ դրսեւորում է *s//r*, աւ. *-ahe/-ahya* (բն. *a/ā* հոլովումներ), հին յուն. *-οιο*՝ բն., *-ος*՝ անբուն, լատ. *-ī*՝ բն., *-is*՝ անբուն, սլաւ. *-a*՝ բն., *-e*՝ անբուն. հնդ. բնաւոր հիմքով հոլովմանը հայերէնում հետեւում են *n* հոլովման պատկանող անունները *-ոյ* (հմմտ. *գայլ-ոյ, գետ-ոյ, մարմն-ոյ, ջր-ոյ, սիր-ոյ* եւն.), ուր *յ* ծագել է **sh*ց. այդ *յ* երկրորդաբար տարածուել է նաեւ *w* հիմքով անունների վրայ²⁴. յգն. սեռ.ը նախահնդերոպականում ունեցել է **-ōm/*-om* վերջաւորութիւնները, առաջինը բնաւորների, իսկ երկրորդը՝ անբունների համար²⁵. յգն. գրբ. սեռ., տր. եւ բցռ. ունեն միեւնոյն *-g* վերջը, որի ծագման վերաբերեալ եղել են տարբեր կարծիքներ²⁶. 4) եթէ եզակիում բցռ. ունի ոչ միայն նախդրաւոր կազմութիւն, այլեւ՝ առանձին հոլովական ցուցիչ՝ *-է*, ապա յոգնակիում՝ սեռ.-տր. հետ նոյնն է ձեւով եւ տարբերում է միայն *h/j* նախդրի առկայութեամբ. 5) գրաբարի գործիականի վերջաւորութիւնների առնչութեամբ ընդհանուր առմամբ կարծիքները միասնական են. դրանք՝ *-բ(-բ), -ւ(-բ), -վ(-բ)*, սերում են հնդ. **-bhi(-s)* վերջաւորութիւնից. գործիականում այս վերջաւորութիւնն ունեն նաեւ հին հնդ.ը եւ հին յուն.ը (հմմտ. սնսկ. *mātṛ -bhiḥ* «մայրերով», *pad-bhiḥ* «ոտքերով», յուն. *πατρό-φι* «հայրերով»²⁷). 6) հնդ. ներգոյականի վերջաւորութիւններն են **-i*՝ եզակիում, **-su*՝ յոգնակիում. բնաւոր հիմքերի դէպքում **-ն* ձուլուել է բնի **o* ձայնաւորի հետ, որը սնսկ.ում տուել է *-e* (*vy k-e* «գայլի մէջ»-բն.) եւ *-i* (*mātar-i* «մոր մէջ»- անբուն), հն. սլաւ.ում՝ *-ѣ* (*вѣ-ѣ*-բն.) եւ *-e* (*mamep-e*-անբուն), լիտվ.ում՝ *-ė* (*vilk-ė-բն.*) եւ *-yje* (*móter-y-je*-անբուն) եւն., եւն.: Յոգնակի ներգոյականը, որպէս կանոն, կազմուել է եզ. նրգ.ին կամ մէկ այլ թեք հոլովաձեւի՝ անհնչիւնափոխ կամ հնչիւնափոխուած, աւելացնելով *-su* (սնսկ. *vy ke-su, mātr -su*), *-xъ* (հն. սլաւ. *вѣуѣ-xъ, mamep-xъ*), *-se*

(լիտ. *vilkuo-sè, móter-y-se*) են., են. գրաբարում ներգոյականը չի ունեցել յատուկ վերջաւորութիւն(ներ). ներգոյականի իմաստն արտայայտուել է *ի(յ)* նախդրի յաւելումով եզակիում՝ տր.-ի (*ի դասեր, յաղեղան*), իսկ յոգնակիում՝ հյց.-ի (*ի դասերս, յաղեղունս*) վրայ. *ա* եւ *ո* արտաքին թեքման գոյականների եզ. ներգոյականի իմաստն արտայայտուում է *ի* նախդրի յաւելումով եզ. հյց.ի ձեւին (*ի տիտան, ի գետ*)²⁸, որովհետեւ սեռ.-տր.ի ձեւին աւելանալու դէպքում կը նոյնանայ բցո.ի հետ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրեալը՝ կարելի է ասել, որ՝ 1) եզակիի յարացոյցում հնդ. ծագում ունեն գրաբարեան ան., հյց., սեռ.-տր. եւ գրծ. հոլովների վերջաւորութիւնները, 2) յոգնակիում ապացուցուած է համարում հյց.ի եւ գրծ.ի վերջաւորութիւնների հնդ. ծագումը, իսկ ան.ի *-քն*, ըստ Մէյէի՝ «*առեղծուածային է. այն բացատրելու նպատակով արուած միակ հասանական ենթադրութիւնը Պր. Պեդերսընին է..... Բայց այդ բացատրութիւնը չի կարելի ստոյգ համարել....*»²⁹, 3) ինչպէս եզ.բցո.ի-է, այնպէս էլ յգն. սեռ.-տր.-բցո.ի-ց վերջաւորութիւնների հնդ. բնոյթի եւ առհասարակ նախաձեւի հարցը մնում է վիճելի:

Վերոյիշեալ փաստերը, եթէ բաւարար չեն *-էի* ծագումը բացատրելու համար, ապա հիմք են տալիս որոշ եզրակացութիւնների համար: Մասնաւորապէս՝ յգն. սեռ.-տր.-բցո.ի համար միեւնոյն *-ց* վերջաւորութեան առկայութիւնից համակարգային մօտեցմամբ կարելի է ենթադրել, որ ոչ միայն *ո*, այլեւ առնուազն *ա* արտաքին թեքման անունների եզակի թում բցո.ը նոյնպէս նախապէս ունեցել է նոյն *-յ* վերջնամասնիկը, ինչ որ սեռ.-տր.ը, որն աւելացել է հիմքի ձայնաւորին (*տիտանայ-ի տիտան-ա-յ, Արշակայ-յ Արշակ-ա-յ, Հերակլէայ-ի Հերակլէ-ա-յ, ած-խոյ-յածխ-ո-յ, բուսոյ-ի բուս-ո-յ, թղթոյ-ի թղթ-ո-յ*): Այս օրինաչափութիւնից, ինչպէս արդէն ասուել է, շեղում են միայն որոշ գոյականներ (*ի տարւոջէ, ի տեղւոջէ*) եւ *մի* թուականը (*ի միոջէ*): Նոյնը կարելի է ասել նաեւ *ու* արտաքին թեքման անունների համար՝ հիմք ընդունելով այն, որ այդ հոլովման պատկանող որոշ բառեր բցո.ը կազմում են սեռ.-տր.ի ձեւից՝ աւելացնելով *-է* մասնիկը (*յայգու-է, ի բարձու-է, ի դասու-է, ի զարդու-է, ի խրատու-է, ի նախանձու-է, ի փոքու-է*), ի տարբերութիւն օրինաչափական՝ ան.ի ձեւից կազմութեան (*ի դաս-է, ի խրատ-է*): Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ *ու* հոլովման անունների բցո.ը նախապէս ունեցել է «ի+(սեռ.)-տր.» կաղապարը, իսկ *-էն* աւելացել է աւելի ուշ համաբանութեամբ: *Ու* հոլովման դէպքում կարելու է նաեւ այն իրողութիւնը, որ սեռ.-տր.ի հետ ձեւով նոյնն է եզ. գրծ.ը (հմմտ. *զարդու* «զարդու»): Այս հոլովման ենթարկուող անունները վերջում *-յ* չունեն, որովհետեւ ունեն մէկ այլ ձայնորդ՝ *-ու*: Այդպիսով, ինչպէս *ա* եւ *ո*, այնպէս էլ *ու* արտաքին թեքման գոյականների եզ. սեռ.-տր.ը ունենում է երկբարբառակերպ կազմութիւն՝ *-այ, -ոյ, -ու (=ու+)*³⁰: Դա է պատճառը, որ

ni հոլովման անունների եզ. գրծ.ի *-ni* վերջն իրենից յետոյ չի ստանում այլ ձայնորդ կամ բաղաձայն, ինչը սովորաբար ստանում են *ա, ո, ի, ի-ա, ո-ա* հոլովումներին ենթարկուող անունները (հմմտ. *տիտանա-ւ, զետո-ւ, սրտի-ւ, աշակերտա-ւ, պատանեա-ւ*): Արդ, ինչպէս կարող էր առաջանալ եզ. բցո.ի *-է* վերջաւորութիւնը եւ ընդհանրանալ չներառելով միայն *ո* պարզ եւ *ո-ա* խառն հոլովումները: Հազիւ թէ կարելի է *-էի* նախաձեռն համարել հնդ. բցո.ի (ablativus) **-ōd* վերջաւորութիւնը: Կարծում ենք՝ այդ մասնիկը նաեւ **-e-te/-os*-ը չէ, ինչպէս որ ենթադրել են Հիւբշմանը եւ Մէլէն: Առաւել հաւանական ենք համարում, որ *-էի նախաձեռն հնդ. տր.ի (dativus) *-ei/*-oi* երկբարբառային վերջաւորութիւններն են (սրանք, բնի ձայնաւորի հետ ձուլուելով, տուել են **-ōi*), որոնք նախագրաբարեան հայերէնի վաղ շրջանում («վաղնջահայերէնում»՝ ըստ Ջահուկեանի³¹) վերածուել են *էի*³²: Հաւանաբար **-ei(>-է)* վերջաւորութիւնը նախ կիրառուել է իբրեւ անբուն գոյականների բացառական, որովհետեւ եղել է անբունների տրականը, ապա համաբանութեամբ տարածուել է նաեւ բնաւորների վրայ: Յետագայ ընդհանրացումով այն տարածուել է նաեւ դերանունների վրայ: Բնարկէ, սեռ.ի եւ տր.ի տարարմատութեամբ պայմանաւորուած, այստեղ անկանոնութիւնն աւելի մեծ է: Որ դերանունների բցո.ը եւս կազմուել է տր.ի ձեւից, վկայում են, օր., *յինէն (<ին-(ձ)-է-ն, սեռ. իս), ի քէն (<քէ-զ, սեռ. քո)* եւ յատկապէս՝ *ի նմանէ (<նմա, սեռ. նորա), յորմէ (<որում, սեռ. որոյ), յումեքէ (<ումեք, սեռ. ուրուք), յումեմնէ (<ումեմն, սեռ. ուրումն)* համապատասխանութիւնները: Այս տեսակէտի համար լրացուցիչ փաստարկ կարող է համարուել եզ. տր.ում-ջ եւ -ում վերջերով անունների բցո.ի կազմութիւնը տր.ի ձեւից (հմմտ. *ի տարւոջէ, ի տեղւոջէ, յառաջնմէ, ի հնմէ, յաջմէ, ի ձախմէ*)³³:

Որոշակի դժուարութիւն է ներկայացնում *ի մէնջ* «մեզանից», *ի քէն* «քեզանից», *ի ձէնջ* «ձեզանից» դերանունական ձեւերի բցո.ում *-է* վերջի բացակայութեան հարցը: Այս ձեւերի առաջացման գործում կարող է դերակատար լինել ինչպէս դրափոխութիւնը, այնպէս էլ աճականի յաւելումը, ինչպէս նաեւ՝ երկուսը միաժամանակ:

Պիտի ենթադրել, որ նախահնդերոպական լեզուից առանձնանալու առաջին շրջանում հայերէնը դեռեւս պահպանել էր ինչպէս սեռ.ի եւ տր.ի, այնպէս էլ բցո.ի միջեւ տարբերութիւնը: Այդ հոլովաձեւերի միջեւ տարբերութիւնները սկսել են ջնջուել հայերէնի ինքնուրոյն զարգացման պատմութեան ընթացքում. սեռ.ը դուրս է մղել տր.ին, իսկ տր.ը՝ բցո.ին: Սեռականի եւ տր.ի տարբերութիւնը մնացուկային ձեւով պահպանուել է սակաւաթիւ անուններում եւ անձնական դերանունների համապատասխան ձեւերում (*ես-իմ-ինձ, դու-քո-քեզ, նա-նորա-նմա* եւն.), իսկ բցո.ի հնագոյն՝ հնդ. վերջաւորութիւնը չի պահպանուել: Այս փոփոխութիւնները, բնականաբար, տեղի են ունեցել երկարատեւ ժամանակի ընթացքում եւ ըստ

ամենայնի՝ այն նոյն փուլում, երբ հնդ. հոլովական համակարգը վերա-
ձեռում էին նաև միւս ցեղակիցները³⁴:

Ըստ էութեան, նման տարակարծութիւններ առկայ են նաև յգն.բցո. -*g*
վերջաւորութեան ծագման հարցի շուրջ: Հայերէնագիտութեան մէջ եր-
կար ժամանակ այս հարցում ընդունելի է համարուել Ս. Բուզէի տեսակե-
տը, ըստ որի՝ գրբ. յգն. սեռ.-տր.-բցո.ի-*g* վերջը ծագել է հնդ. **-sko-* վերջա-
ծանցից (եւ ոչ թէ վերջաւորութիւնից)³⁵: Մէյէն ընդունում է այս տեսակե-
տը, սակայն համամիտ չէ, երբ Բուզէն այն համեմատում է յուն. -σοςի
հետ: Ըստ Մէյէի՝ բնաւոր հիմքերի դէպքում այդ վերջածանցին նախորդել
է բնի ձայնաւորը եւ հոլովական վերջաւորութիւնն ստացել է **-ā-sko-s*, **-
u-sko-s*, **-i-sko-s* ձեւը, իսկ անբունների դէպքում այդ մասնիկն աւելացել է
հիմքին³⁶: Եւ իսկապէս էլ **skn* (ինչպէս եւ **sk*, **ks*, **kh*, **k*, **sr*) հայերէնում
ստուել է *u(s)* (հմմտ. **skel*-«կտրել»>*ցելում* «ծակել, ճեղքել»,- *ցել* «տոհմ»,
skid*-(skai-d*-) «կտրել, բաժանել»>*ցտիւ* «իբ մաշկը քերծել», **skēyo*
(<**skeu*-) «ծածկել»>*ցիւ* «տանիք»): Այս տեսակետը իշխող է եղել մինչեւ
Խեթերէնի հնդ. բնոյթի ապացուցումը Բ. Հոզնու կողմից՝ 1915-17ի ըն-
թացքում, որից յետոյ ինչպէս շատ կարծիքներ, դա եւս վերանայելու ան-
հրաժեշտութիւն զգացուեց: Օրինակ Է. Ստուրտեսանտը հյ. սեռ.-տր.-
բցո.ի-*g* վերջը դիտարկեց խեթ. բցո. -z(a) վերջաւորութեան հետ զուգահե-
ռի մէջ: Սկզբնապէս այս վարկածին հակուած է եղել նաև Ջահուկեանը³⁷,
բայց աւելի ուշ նա այդ միտքը համարում է «*միայն հաւանական վարկած,
որի (խեթ. -z(a)ի - Վ.Պ.) ծագումն առայժմ ոչ լիովին է բացայայտուած*»³⁸:
Մէյէն միեւնոյն **-ske/o*ից սերուած է համարում նաև աորիստի
(գրաբարեան կատարեալի) -*g* վերջը (հմմտ. *սիրեաց* «նա սիրեց»)³⁹:

Կարծում ենք՝ հարցը քննելիս՝ պիտի նկատի ունենալ հետեւեալ
հանգամանքները.-

1) Հնչոյթային համընկնումը դեռեւս բաւարար չէ, որպէսզի տարբեր
քերականական իմաստներ արտայայտող սեռ.-տր.-բցո.ի -*gh*ն եւ աորի-
ստի -*gh*ն վերագրուի միեւնոյն ծագումը: Մասնաւորապէս, մակբայա-
կան **-ske/o*ից խոնարհման դաս ցոյց տուող -*gh* ծագումը միանգամայն
հնարաւոր է, բայց հաւանական չէ այդ նոյն մասնիկից հոլովման դասի -*g*
ցուցիչի ծագումը: Ճիշտ կը լինի հոլովական -*gh* ծագումնաբանութիւնը
փնտռել այլ տեղ, որքան էլ որ դրա հիմքերը «մթին» լինեն:

2) Յգն. տր. ու բցո. նոյն վերջն ունեն սանսկրիտում՝ բն. հլ. դէպքում
(vṛ ke-*bhyaḥ*-«գայլերի(ն)»/«գայլերից»), բաղաձայնական վերջով (mātr-
bhyaḥ «մայրերի(ն)»/«մայրերից») եւ -*i* հիմքով (avi-*bhyaḥ*-«ոչխարների(ն)»/-
«ոչխարներից»)՝ անբունների դէպքում, հն. սլաւ.՝ -ā հիմքով ա-նունների
դէպքում (нога-мъ «ոտքերի(ն)»/«ոտքերից»), լատ.՝ բն. (lup-*īs* «գայլե-
րի(ն)»/«գայլերից»), բաղաձայնական վերջով (mātri-*bus* «մայրերի(ն)»/«մայ-
րերից»)՝ անբունների դէպքում:

3) Ինչպես հին հնդկերենի քերականություններում, այնպես էլ համեմատաբանական այլ աշխատանքներում յաճախ սնսկ. *h*ը նշանակում է *smi*⁴⁰, որը վկայում է ոչ միայն այդ երկու գրերով նշանակուող հնչյոթների հնչյունական մերձատրություն մասին հին հնդկերենում, այլև սնսկ. *h*ի եւ ցեղակիցների *sh* ծագումնաբանական ընդհանրության, մի հանգամանք, որ կարեւոր նշանակություն ունի այս հարցի համար:

4) Աւեստայի տր. ու բցո. նոյնպես սերում են հնդ. **-bhyos*ից, սակայն, ի տարբերություն հին հնդկերենի, կորցրել են վերջին *sh*, իսկ շնչեղ ձայնեղ *bh*ը վերածել են պարզ ձայնեղի *b* (հմմտ.–տր.–byō. նախորդող *aēn* (տր.) եւ *ān* (բցո.) բնի բաղադրիչներ են)⁴¹:

5) Ինչպես **-bh*, այնպես էլ **-m* խմբի հնդ. բարբառների համար նախալեզու՝ վերականգնուող վերջատրությունները յգն. տր. եւ բցո. ունեն նոյն ձևը **-bhyos/*-mos*:

6) Յգն. սեռ.ը, մի վարկածի համաձայն, նախապես ունեցել է **-om-s* վերջը եւ *-s*ի ազդեցությամբ է **-o*ն վերածուել **-ō*ի. ըստ այս վարկածի հեղինակների՝ «այդպիսի *-s*ի հետքերը կարելի է տեսնել խեթերենում սեռական հոլովի յոզնակի թուի *-enz-[an]* վերջատրության մեջ», «հմմտ. նաեւ լուվ.–*nzan* որպես յգն. սեռ. հլ. վերջատրություն... հնարաւոր *-nz-as* վերջատրության դէպքում»⁴²:

7) «Մեռականի նախնական ցուցիչների վերաբաշխմանը մեծապես օժանդակել են հնդերոպական անուանական դասերի երկանդամ համակարգի քայքայումը եւ առանձին անուանական ձևերի անցումը մի դասից միւսին, ինչը յանգեցրել է դիտարկուող հնդերոպական բարբառներում սեռականի ձևերի կազմաւորման խայտաբղետ պատկերի՝ պայմանաւորուած անուանական հիմքերի կառուցուածքային տիպով»⁴³:

8) Նախահնդերոպական լեզուից անջատուած հայկական բարբառը կամ նախահայերէնը հնարաւոր է՝ շուրջ մէկ հազարամեակ շփան մեջ է եղել փոքրասիական ցեղախմբերի ու ժողովուրդների, այդ թում՝ խեթալուվիական ժողովուրդների լեզուների հետ: Որքան էլ լեզուի քերականական կառուցուածքն աւելի կայուն է, քան, օրինակ՝ հնչյոթայինը, միեւնոյնն է, այն եւս ենթակայ է ազդեցությունների: Չպէտք է բացառել, որ նախահայերէնի՝ հնդ. նախալեզուից ժառանգած հոլովական համակարգը կարող էր փոփոխուել նաեւ փոքրասիական լեզուների ազդեցությամբ եւ առանձին դէպքերում յանգել այնպիսի ձևերի, որոնց կապը հնդ. նախաձևերի հետ հասնէր անճանաչելիութան⁴⁴, ինչը մենք տեսնում ենք գրբ. յգն. սեռ.–տր.–բցո.ի *-g* վերջատրութեան դէպքում: Այստեղ եւս, ինչպես եզակիում, խնդրի հանգուցալուծմանը կարող են օգնել, թերեւս, տիպաբանական զուգահեռները: Խեթերէնում տարբեր հիմքերով հոլովումներում գոյականը կամ ածականը յգն. սեռ., տր., նրգ. հոլովներում ունեն միեւնոյն *-as(-as)*, իսկ բցո.՝ *-az* վերջատրութիւնը

(հմմտ. –i հիմք. šalliš «մեծ»-յգն. տր.-նրգ. *šallaj-aš* «մեծ-ագ/մեծ-ալք», –u հիմք. genu- «ծուն-գք/-կք»-յգն. սեռ.-տր.-նրգ. genu-*aš* «ծնագաց /ի ծունագ», ginu-*az* «ի ծնագաց», –nt- հիմք. human- «իւրաքանչիւր, ամէն մի», յգն. սեռ.-տր.-նրգ. *humandaš* «իւրաքանչիւրոց/իւրաքանչիւրս», –*r/n-* հիմք. pir- «տուն», յգն. տր.-նրգ. *parnaš* «տանց/ի տունս»). խեթերէն-հայերէն առնչութիւններում նկատուել են՝ ա) *š-ž* (խեթ. *šallakartāi-* «անմտօրէն վարուել», *šallakartahh* «անմտօրէն վարուել, բարկացնել»-հյ. շաղակ-բատել «դատարկաբանել», խեթ. *šeli-* «հացահատիկի, ցորենի շեղջ»-հյ. *շեղջ* «հացահատիկի, ցորենի կոյտ», խեթ. *išha-*, լուվ. *yašha-*, խեթ. *yašha-s* «տէր»-հյ. իշխան, իշխել են.), բ) *š-u* (հմմտ. խեթ. *šagai-* «նախանշան, կանխանշան», *šakija-* «յայտնել, յատարարել»-հյ. *սակ* «պայման, սահմանուած չափ, կոպար, կարգ, դաշն, օրէնք», խեթ. *ušk-* «տեսնել»-հյ. *սկեմ*, այլեւ *հսկեմ* են.)⁴⁵: Ֆրիդրիխի *Խեթերէն Լեզուի Համառօտ Քերականութիւնի* մէջ հանդիպում է *halki-*(–i հիմք) «(ցորենի) հաց» օրինակը, որի յգն. հոլովածէրից յայտնի են միայն ան. (*halkēš*) եւ հյգ. (*halkiuš*) ձեւերը, իսկ եգ. սեռ. ունի *halkijaš* ձեւը. նկատի ունենալով, որ այս հոլովման պատկանող *halhaltumari-* «անկիւնաքար» բառի յգն. սեռ.-նրգ. եւս ունի –*aš* վերջը *halhaltumarij-aš* «անկիւնաքարանց/ յանկիւնաքարս»⁴⁶, ապա կարելի է ենթադրել նաեւ յգն. սեռ.-տրի **halkijaš* ձեւ հյ. *hawghgh* դիմաց, այսինքն՝ խեթ. –*š-hj.-g* համապատասխանութիւն: Ասուածը, իհարկէ, չի նշանակում, թէ հին հայերէնի յգն. սեռ.-տր.-բցո.ի –*g* վերջը խեթ. –*š*ի համարժեքն է, բայց ենթադրում է, որ այդ վերջաւորութիւնը կարող էր առաջանալ նաեւ խեթ. –*š*ի համաբանութեամբ:

Չին հայերէնի բացառականի մասին մեր պատկերացումն ամբողջացնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ նաեւ *h* նախ-դրին, որի ծագումնաբանութեան հարցը եւս հայերէնագիտութեան մէջ տարակարծութիւններ է առաջացրել: Այսպէս. 1) Պեդերսընը մերժել է բցո. *h* նախդրի վերաբերեալ Մէլի տեսակետը, ըստ որի՝ այն նոյնն է պլաուներէնի *uzb* (<**eks*)ի հետ: Նա *h* նախդիրը դիտարկում է հնդ. **en* = հն. *én*, լատ. *in*, գրմն. *in* համարժեքների հետ գուգահեռի մէջ: Հայերէնում –*ն* ոնգայինին նախորդող դիրքում տեղի է ունեցել *e>h* անցում (հմմտ. **penkwe>hինգ*, **senos>հին*), այնուհետեւ *ն*ն ընկել էի: **En>h*ի նշանակութիւնն է «մէջ», որը յստակ արտայայտում է ներգոյականում: 2) Նկատի ունենալով բցո. *h*ի եւ նրգ. *h*ի իմաստային տարբերութիւնը՝ Աճառեանը հակուած է ընդունելու Մէլի տեսակետը, մասնաւորապէս՝ հյ. բցո. *h*ն դիտելու իբրեւ լատ. *eh* գուգահեռը⁴⁷:

Իսկապէս էլ կիրառական նշանակութիւնը հիմք ընդունելու դէպքում գրբ. բցո. *h*ն պիտի համարել լատ. *e*, *ex*ի համարժեքը, որովհետեւ եթէ *ablativus*ի հետ գործածուող *in*ը պատասխանում է *opuntē ū* հարցին, այսինքն՝ նրգ.ի, ապա *e*ն համարժեք է բցո. –*hg* վերջաւորութեանը (ոս. *uz*

նախդրին), այսինքն՝ իր խնդրի հետ կը պատասխանի *որտեղի՞ց* հարցին: Բայց արդե՞ս այդքանը բաւարար է ասելու համար, թէ գրք. բցռ. *ին* եւ ներգ. *-ին* տարբեր ծագում ունեն, այն դէպքում, երբ նախդրաւոր կառուցուածք չեն ունեցել ո՛չ նախահնդեւրոպականի եւ ո՛չ էլ, օրինակ՝ հն. հնդկ.ի, հն. յուն.ի կամ իւեթ.ի հոլովաձեւերը (այդ թուում՝ բցռ.ը), որոնց ձեւերն ամէնից մօտն են համարում հնդ. Լեզուակառուցուածքին: Ոչ պակաս կարեւոր է այն հանգամանքը, որ, օրինակ, ոչ թէ լատ. *ablativus*ն է նախդրաւոր, այլ՝ նախդիրները, գործածուելով *ablativus*ի հետ, նրան հաղորդում են տարբեր նշանակութիւններ՝ բցռ.ի, գրծ.ի, նրգ.ի, այնպէս, ինչպէս *q* նախդիրը, ըստ հին քերականների, բցռ.ի հետ կիրառուելով՝ նրան հաղորդում էր *պատմական* հոլովի նշանակութիւն (հմմտ. պատմել *զնոցանէ*՝ «նրա մասին» կամ «նրանից»), իսկ գրծ.ի հետ կիրառուելով՝ *պարստական* հոլովի նշանակութիւն (հմմտ. գրադաքաւ «քաղաքի շուրջը»): Ի տարբերութիւն գրաբարի բցռ.ի կամ նրգ.ի, որոնք պարզապէս հնարաւոր չեն առանց համապատասխան նախդրի (հմմտ. *գրոյ, պատանոյ* ձեւերը, առանց *ի* նախդրի, արտայայտում են եզ. սեռ.-տր.ի իմաստ, հմպտս. «գրի/(ն)», «պատանու/(ն)», իսկ *ի* նախդրով՝ եզ. բցռ.ի («գրից», «պատանուց»), նոյն կերպ՝ *ի զեռոյ* եւ *ի զեսս* յգն. բցռ. եւ նրգ. են, իսկ առանց նախդրի՝ հմպտս. եզ. սեռ.-տր. եւ յգն. հյց.,- լատ. *ablativus*ը գործածական է առանց որեւէ նախդրի (հմմտ. *agr-ō* «դաշտ-ից/-ու/-ում», *vir-ō* «տղամարդ-ուց/-ով/-ու մէջ», *leg-ē* «օրէնք-ից/-ով/-ում»): Ասուածից կարելի է եզրակացնել, որ *նախդրաւոր բցռ.ը զուտ հայերէնեան կազմութիւն է, որի ին ասելի հաւանական է, որ համաբանութեամբ անցած լինի ներգոյականից*. Այսպիսի բացատրութեան համար մենք տեսնում ենք երկու հիմք. ա) *ի տանէ, ի ծովէ, յաշակերտէ, յԱրշակէ* եւ նման ձեւերի նախնական ըմբռնումը, ըստ ամենայնի, եղել է «տան միջից», «ծովի միջից», «աշակերտի միջից», «Արշակի միջից», այսինքն՝ համատեղել է նրգ.ին բնորոշ «մի բանի մէջ, ներսում» եւ բցռ.ի՝ «նրանից դուրս գալու, անջատուելու» իմաստները. ըստ էութեան նոյն բանը նկատի ունի Պեղերսընը՝ վկայակոչելով դանիերէնի օրինակը. հմմտ. *fra inde i byen* (կամ՝ *fra i byen*) «քաղաքի մէջէ»⁴⁸, բ) *n* պարզ եւ *n-w* խառն հոլովման բցռ. ձեւերում *ի* նախդրի գործածութիւնը սեռ.-տր.ի ձեւերի հետ շփոթը կանխելու անխուսափելի միջոց էր:

Ամփոփելով վերոշարադրեալը՝ կարելի է ասել, որ հին հայերէնի 1) եզակի բացառականի *-է* վերջաւորութիւնը սերում է հնդ. տրականի **(-oi>)ei* երկբարբառային վերջաւորութիւններից, որոնք նախագրաբարեան վաղ շրջանում վերածուել են *-էի*, 2) յոգնակի բացառականի *-ց* վերջաւորութիւնը, նոյնը լինելով սեռական-տրականի հետ, ենթադրաբար զարգացել է իւթերէնի յոգնակի սեռական-տրական (*-բացառականի*) *-ճ* վերջաւորութեան համաբանութեամբ, 3) բացառականի նախդրաւոր

կազմությունը հայերենին բնորոշ իրողություն է, որն առաջացել է բացառականը (նաև ներգոյականը) սեռական-տրականից (հմպտս. անունական-հայցականից) ձևով տարբերակելու համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Սա Անտուան Մէլէի գրքի 7րդ, եւ իր կենդանութեան լոյս տեսած վերջին հրատարակութիւնն է, որից էլ կատարուել է 1938ի ռուսերէն թարգմանութիւնը:
- ² Բնքնատիպ վարկածներից մէկի հեղինակն է 1950ականների կեսի իտալացի նշանաւոր լեզուաբան, նեոլինգուիստիկական դպրոցի ներկայացուցիչ Պիզանին, ըստ որի՝ հայերենի յոգնակիի թն բերել են «հիւսիսից եկած» նուաճողները, որպիսիք նա համարում է փոխագցիներին (Վիտտորէ Պիզանի, «Հնդեւրոպական Լեզուների Ծագումը», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1979, թիւ 1, էջ 210):
- ³ Անտ. Մէլէ, *Հայագիտական Ուսումնասիրութիւններ*, Երեւան, ԵՀՀ, 1978, էջ 399:
- ⁴ Հայնրիխ Հիբշման, *Հայագիտական Ուսումնասիրութիւններ*, Երեւան, ԵՀՀ, 2004, էջ 256:
- ⁵ Հովգեր Պեդերսըն, *Նպաստ Սը Հայ Լեզուի Պատմութեան*, Վիեննա, Միլիթարեան Տպարան, 1904, էջ 41:
- ⁶ Նոյն, էջ 42:
- ⁷ *Տեղի* եւ *տարի* գոյականների բացառականն ունեցել է նաև *-n* հիմքով բառերի համար սովորական *ի տեղոյ* «տեղից» եւ *ի տարոյ* «տարուց» ձևերը, որոնք, սակայն, քիչ գործածական են եղել (Ա. Ա. Աբրահամեան, *Գրաբարի Ձեռնարկ*, Երեւան, «Լոյս», 1976, էջ 51):
- ⁸ Նոյն:
- ⁹ Հրաչեայ Աճառեան, *Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի*, Հտր. 3, Երեւան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1957, էջ 431. նաև՝ Գեորգ Ջահուկեան, *Հին Հայերենի Հնլովման Միաստէմը Եւ Նրա Ծագումը*, Երեւան, ԵՀՀ, 1959, էջ 218:
- ¹⁰ P. Shantren, *Istoricheskaya Morfologiya Grecheskogo Yazika* (Յունարէն լեզուի պատմական ձևաբանութիւն), ԻԼ, Մոսկուա, 1953, էջ 13-15:
- ¹¹ A. Ernu, *Istoricheskaya Morfologiya Latinskogo Yazika* (Լատինարէն լեզուի պատմական ձևաբանութիւն), ԻԼ, Մոսկուա, 1950, էջ 20:
- ¹² J. Fridrikh, *Kratkaya Grammatika Khetskogo Yazika* (Համառոտ պատմութիւն իւթական լեզուի), ԻԼ, Մոսկուա, 1952, էջ 57-58. նաև՝ A. A. Korolyow, “Khetto-Luwyskie Yazyki”, *Yaziki Azii I Afriki* (Խեթա-լուվիական լեզուներ, Ասիոյ եւ Աֆրիկայի լեզուները), *T. I*, Nauka, Մոսկուա, 1976, էջ 19:
- ¹³ M. M. Gukhman, *Gotskiy Yazyk*, ԻԼԻԿ, Մոսկուա, 1958, էջ 72:
- ¹⁴ H. Lewis, H. Pedersen, *Kratkaya Srawnitel'naya Grammatika Keltskikh Yazikov* (Խեթական լեզուների համառոտ համեմատական քերականութիւն), ԻԼ, Մոսկուա, 1954, էջ 204:
- ¹⁵ W. W. Iwanow, W. N. Toporow, *Sanskrit*, Nauka, Մոսկուա, 1960, էջ 76-91. նաև՝ T. Ya. Elizarenkova, “Sanskrit”, *Yaziki Mira (Indoariyskie Yaziki Drevnego I Srednego Periodov)* (Աշխարհի լեզուները, հին եւ միջին շրջանի հնդարիական լեզուները), Academia, Մոսկուա, 2004, էջ 39-41:

- ¹⁶ M. N. Peterson, *Ocherk Litovskogo Yazika* (Ակնարկ լիտուական լեզուի մասին), Մոսկուա, 1955, էջ 36-45:
- ¹⁷ W. S. Rastorguewa, “Drewneiranskie Yaziki” (Հին իրանական լեզուները), *Yaziki Azii I Afriki, T. II*, Nauka, Մոսկուա, 1978, էջ 30-31:
- ¹⁸ Լատիներենում, սլավոներենում եւ լիտուերենում անբունների ուղղականն ու կոչականը ձեռով չեն տարբերում:
- ¹⁹ A. Meillet, *Esquisse d'une Grammaire Comparée de l'Arménien Classique*, Վիեննա, Միլիթարեան Տպարան, 1936, էջ 64. նաեւ՝ Աճառեան, *Լիակատար, Հտր. 3*, էջ 428. նաեւ՝ Ջահուկեան, *Հին Հայերէնի Հոլովման....*, էջ 212-213. նաեւ՝ G.B. Djahukian, *Srawnitelnaya Grammatika Armyanskogo Yazika*, (Հայերէն լեզուի համեմատական քերականութիւն) Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 137: Այս գրքում Ջահուկեանը նկատում է, սակայն, որ «...այդ դրոյթն ուղղակի իմաստով պիտի հասկանալ միայն ձայնատրական հիմքերի մեծ մասի համար: Մնացեալ դէպքերում վերջատրութեան գործառոյթն ամբողջութեամբ կամ մասնակիօրէն իր վրայ է վերջնում հերթագայութիւնը, կամ էլ հիմքի վերջնային բաղադրիչներէց որեւէ մէկը հանդէս է գալիս որպէս բուն վերջատրութիւն» (տոյն):
- ²⁰ Բաց վանկի օրէնքի համաձայն սլավոներենում հյգ.ի վերջատրութեան -սն ընկել է, «իսկ օտ կապակցութիւնը, յայտնուելով բառավերջում, օրինաչափօրէն տուել է ն» (A. N. Sawchenko, *Srawnitelnaya Grammatika Indoevropskikh Yazikov* (Հնդեւրոպական լեզուների համեմատական քերականութիւն), Մոսկուա, «Vysšaya škola», 1974, էջ 196):
- ²¹ Խեթերէնում -us վերջն առաջարկում է Ֆրիդրիխը (J. Fridrikh, *Kratkaya Grammatika Khetskogo Yazika* (Խեթերէն լեզուի համառօտ պատմութիւն), III, Մոսկուա, 1952, էջ 59): Իսկ, Ա. Ն. Սաւչենկօն եւ Ա. Ա. Կորոլյովը առաջարկում են -us վերջը (Sawchenko, էջ 196 եւ Korolyov, էջ 19): Այս երեւոյթը խեթական բեւեռագրերի տարրնթերցման արդիւնք է, որովհետեւ դրանք տարբերակիչ նշաններ չունեն ինչ եւ ինչ համար. երկու հնչոյթն էլ աստայայտում են միեւնոյն ճ գրով (Գ. Ա. Ղափանցեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն. Հին Շրջան*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1961, էջ 161):
- ²² Այդ իմբին պատկանող որոշ բառերի յգն. սովորական չէ կամ էլ անկանոնութիւն է դրսեւորում (հմմտ. *ասր* (=բուրդ), *թանձր*, *ծաղր*, *կարծր*, *մեղր*):
- ²³ *Ռոտացիզմը* շփական բաղաձայնի (սովորաբար՝ ի կամ հի) անցումն է փ:
- ²⁴ Djahukian, էջ 138:
- ²⁵ Մէլէն առաջարկել է *-ōm եւ *ōn նախաձեւերը, երկրորդը, օր.՝ յուն. -ōv (*κυν-ων* «շների») վերջատրութեան համար (A. Meye, *Vvedenie V Sravnitelnoe Izuchenie Indoevropskikh Yazikov* (Հնդեւրոպական լեզուների համեմատական ուսումնասիրութեան ներածութիւն), GSEU, Մոսկուա-Լենինգրադ, 1938, էջ 305): Ըստ էութեան, Մէլէի տեսութեանն է հետեւել Ջահուկեանն իր գիտական գործունէութեան վաղ շրջանում (Ջահուկեան, *Հին Հայերէնի Հոլովման....*, էջ 223):
- ²⁶ Նոյն. նաեւ՝ Djahukian, էջեր 139, 224:
- ²⁷ Հին յունարէնի օրինակն ըստ Օդրիի (J. Odri, *Indoevropskiy Yazik: Novoe V Zarubejnoj Lingvistike* (Հնդեւրոպական լեզուն. նորութիւն արտասահմանեան լեզուաբանութեան մէջ), *Vip. 21*, Մոսկուա, Փրոկրէս, 1988, էջ 50): -φ(ν) վերջը

գրծ.ի հնագոյն ձևն է եւ հագուադէպ հանդիպում է Հումերոսի երկերում: Յունարէնի բարբառներում առաւել տարածուած տարբերակն է *-σίν*, որը միաժամանակ ունի տր.ի եւ բցո.ի իմաստ: Հնդ. «գործիական հոլովի վերջաւորութիւնների մասին հարցը,- ըստ Մէլէի, որոշակի դժուարութիւն է ներկայացնում եւ,- բաց է մնում» (Meillet, *Vvedenie*, էջ 304): Գրծ.ի վերջաւորութիւնների բազմազանութիւնը ցեղակից լեզուներում լուրջ խոչընդոտ է միասնական նախաձեւի վերականգնման համար (Sawchenko, էջ 204): Տարբերակում է **-bhin*՝ գրծ.ի երկու ճիւղաւորում՝ *-bhi*, որը, հին հնդ., հին յուն. եւ գրբ. բացի, ունեն նաեւ հին պրսկ. եւ աւեստ. (*-biš*. հմմտ. աւ. *bāzu-biš* «ձեռքերով») եւ *-bho*, որն ունեն գալլ. (*-bo*), մեսապ. (*-ba-s*) եւ լատ. (*-bus.- mātribus* «մայրեր-ին/ից/-ու»):

²⁸ Ջահուկեանը գրբ. յգն. ներգոյականի –ւ վերջը «աթեմատիկ բաղաձայնաձայնորդայնագ հիմքերի դէպքում» սերուած է համարում հնդ. *-*shg*, որը համաբանութեամբ տարածուել է նաեւ բնաւորների վրայ, ուստի եւ նրան վերագրում է հյց.ի –*shg* տարբեր ծագում (Ջահուկեան, *Հին Հայերէնի Հոլովման*, էջ 222-223): Ըստ երեւոյթին, այս տեսակետը նա յետագայում վերանայել է, որովհետեւ իր *Sravitel'naya Grammatika*ում (Համեմատական քերականութիւն) ներգոյական հոլով չի տարբերակում:

Ներգոյականի առնչութեամբ ուշագրաւ է Բենուենիստի դիրքորոշումը: Նա մերժել է ներգոյականի՝ որպէս ինքնուրոյն հոլովի գոյութիւնը նախահնդերոպականում՝ այն համարելով անուանական-հայցականի դրսեւորումներից մէկը եւ նրան տալով «անորոշ հոլով» անուանումը. վերջինը «հնդերոպական լեզուում ունեցել է չէզոք սեռի հիմքի հետ համընկնող ձև» (E. Benvenist, *Indoeuropeyskoe Imennoe Slovoobrazovanie* (Հնդերոպական անուանական բառակազմութիւն), III, Մոսկուա, 1955, էջ 128): Այս խնդրին չենք անդրադառնում, որովհետեւ մեր հարցի տեսանկիւնից սկզբունքային նշանակութիւն չունի:

²⁹ Մէլէ, էջ 400:

³⁰ Մեր համոզմամբ գրաբարում *niz* պարզ ձայնաւոր չէր, այլ՝ երկբարբառակերպ: Այդ հարցին մենք անդրադարձել ենք «Երկբարբառային Եւ Եռաբարբառային Կազմութիւնները Գրաբարում»՝ առայժմ անտիպ յօդուածում (տպագրութեան է ընդունուել *Բազմապէկում*):

³¹ Գ. Բ. Ջահուկեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն. Նախագրային Ժամանակաշրջան*, Երեւան, ՀՄՍՀ ԳԱՀ, 1987:

³² Հայնրիխ Հիւբշման, «Հայերէնի Դիրքը Հնդերոպական Լեզուների Շրջանակներում», *Հայագիտական Ուսումնասիրութիւններ*, Երեւան, ԵՀՀ, 2004, էջ 40, 224-225. նաեւ Meillet, *Esquisse...*, էջ 44. նաեւ՝ Հովգեր Պեդերսըն, *Հայերէն եւ Դրացի Լեզուները*, Վիեննա, Միխիթեան Տպ., 1907, էջ 106. նաեւ՝ Ն. Աճառեան, *Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի*, *Հտր. 6*, Երեւան, 1971, էջ 514. նաեւ՝ Է. Բ. Աղայեան, *Գրաբարի Քերականութիւն*, *Հտր. 1*, Երեւան, ՀՄՍՀ ԳԱՀ, 1964, էջ 134-136. նաեւ՝ Djahukian, էջ 27:

³³ Պեդերսընը այս շարքին է դասում նաեւ *ի տուրնջենէ* (սեռ.-տր. *տուրնջեան*) ձևը (Պեդերսըն, *Նյաստ մը...*, էջ 37):

³⁴ Sawchenko, էջ 170-71: Չնայած որ դասական հնդերոպարանութեան համաձայն հին հնդկերէնի հոլովական համակարգն ամենից լաւ է պահպանել նախալեզ-

- ուի ձևերը, բայց եւ այնպէս, այն եւս որոշ փոփոխութիւններ կրել է: Այսպէս, Բարոնն սանսկրիտում «անկանոնութիւն» է համարում այն, որ եզակիում բոց. նոյնն է սեռ. հետ, իսկ յոգնակիում՝ տր.ի (Burrow, *Sanskrit*, IIL, 1976, էջ 225):
- ³⁵ Ջահուկեան, *Հին Հայերէնի Հոլովման*, էջ 223:
- ³⁶ Meillet, *Esquisse....*, էջ 72:
- ³⁷ Ջահուկեան, *Հին Հայերէնի Հոլովման*, ծնթ.2:
- ³⁸ Djahukian, էջ 139:
- ³⁹ Meye, *Vvedenie*, էջ 235-236:
- ⁴⁰ Elizarenkova, նոյն. նաեւ՝ Burrow, նոյն. նաեւ՝ O. Semereni, *Vvedenie V Sravnitelnoe Yazikoznanie* (Համեմատական լեզուաբանութեան ներածութիւն), Մոսկուա, Փրոկրէս, 1980, էջ 167-215:
- ⁴¹ Rastorguewa, նոյն:
- ⁴² Th. V. Gamkrelidze, Vyach. Vs. Ivanov, *Indoevropskiy Yazik I Indoevropeyski* (Հնդեւրոպական լեզուն եւ հնդեւրոպացիներ), *V. I*, Թբիլիսի, ITU, 1984, էջ 268-269:
- ⁴³ Նոյն, էջ 270:
- ⁴⁴ «Մեռական-տրական-բացատրականի -ց բնորոշ գիծը ընդհանուր ոչինչ չունի հնդեւրոպական միւս լեզուների նոյն հոլովների որեւէ մէկի ձևերի հետ» (Մէլէ, էջ 400):
- ⁴⁵ Գ. Բ. Ջահուկեան, *Հայերէնը Եւ Հնդեւրոպական Հին Լեզուները*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1970, էջ 151-156:
- ⁴⁶ Fridrikh, էջ 61:
- ⁴⁷ Աճառեան, *Լիակատար Քերականութիւն....*, *Հտր. 5*, 1965, էջ 80-81:
- ⁴⁸ Պեղերսըն, էջ 43:

THE ORIGIN OF ABLATIVE CASE ENDINGS IN OLD ARMENIAN
(SUMMARY)

VARTAN PETROSSIAN
d.hovhannisyan@president.am

Among *Krapar* (ancient Armenian) case endings only the origin of the declination endings of the Instrumental Case singular -p, -l, -l (-b, -v, -u) and the Accusative Case plural -u (-s) were not controversial: the prototype of the first is considered to be the Indo-European *-bhi, and for the second *-ns. Alongside the other case declination endings, the origin of the Ablative Case singular -t (-e) and the Ablative Case plural -g (-ts) gave rise to dispute.

The author analyses this phenomenon through a typological comparison of a number of Indo-European languages and uses a systematic approach to argue that: a) the prototype of the Ablative Case declination ending -t (-e) is the Indo-European diphthong endings *(-oi>)ei of the Dative Case, b) the -g (-ts) declination ending of the Ablative Case plural has developed from the Hittite plural forms in analogy with the Genitive-Dative (Ablative) Case -š ending, c) the prefix (with h- (i-)) formation of the Ablative Case emerged during the independent development of the Armenian language in the phase of *Krapar* to differentiate it through its form from the Genitive-Dative.